Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Futtelp Bugyng
Vorgesprochen [illegible]

LGn
1055

Futni
1873.

1999

Լ. Օ Ի
ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՐԻՒ

Կամ Համառօտ նկատողութիւն
Մարգասիրական Ընկերութեան.
յօրինեաց նոյն Ընկերութեան Անդամ և
Առնադպիր Սերգէյ Մ. Վարշամեանց.

1873 թ.

Ռագու.

LCO
1055

...ено Цензурою. Тифлисъ 18 Апрѣля 1873 г.

Դ. Տպարանի Հայոց Մարդասիրական Ընկերութեան Հրատարակ.

Բաֆֆի Հայոց մարդասիրական ընկերություն

43805-Ա.Հ.

ՀԱՏԻՄ

ԳՐԱԴԱՐԱՆ

118

Կամ համառօտ նկատողութիւն, յօրինեալ յատենապետէ Մարդասիրական Ընկերութեան, որ և ընթերցեալ եղև յաւուրն երրորդ տարեդարձի նոյն ընկերութեան յառաջ քան զընտրողութիւն խորհրդական Անդամոց վասն յառաջիկայ 1873, 1874 և 1875 ամաց։

Սիրելի՛ Հանդիսականք և ընկերակիցք իմ, իրաւունք ստացած մեր Գերազնիւ Նախագահէն և մեծապատիւ Խորհրդական Անդամներէն, ես այս օր կամ-

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ԳՐԱԴԱՐԱՆ

28-1055

(1055-ա)

28-2276-69

նում եմ, մինչև Անդամների ընտրությունը, մի քանի խօսքերով Ձեզ հետ զրուցել յառաջադէպ խնդրելով ներողութիւն այն մասին, որ եթէ Ձեր լսելիքը կարելի է իմ շատախօսութենով ձանձրանան, բայց իմացէք, որ տարին մի անգամ է պատահում, որ ազգային գործի համար կարողանում ենք մի փոքր միջոց Ձեզ հետ տեսնվել. բայի սորանից, եթէ բոլոր տարին մեր մարմնոյ հոգսը քաշելով, միշտ մտատանջութեան մէջն ենք, թէ ինչ անենք, որ մեր յեղյեղուկ մարմինը չհիւանդանայ և չմեռնի և կամ թէ ինչ հնարք գտնենք, որ միշտ մեր կեանքը ապահով անցուցանենք, մեր քսակները դանձով լիքը, մեր տներ զարդարած, այնպէս որ առանց ամօթոյ ընդունել կարողանանք հիւրին. ապա ուրեմն մի երկու ժամ թողէք զրուցենք մեր այրիացեալ հոգւոյ վերայ և տեսնենք թէ արդեօք հիւանդէ նա, թէ առողջ: (Դ հարկէ հոգի ասելով դուք պիտի հասկանաք իւրաքանչիւր մարդոյ հոգևորվելը բարեգործական ասպարիզում), Եթէ հիւանդ է, ուրեմն բժիշ-

է հարկաւոր, որ չմեռանի?. կամ թէ հեռանում ենք արդեօք մեզի պահ տուած Երկնաւոր Հօր քանքարը շահեցուցանել, և սրբում ենք արդեօք մեր սրտերը, մեր մարմնաւոր տաճարները, Աստուծոյ խորհրդածութիւններով, որ առանց ամօթոյ Երկնային Հիւրին կարողանանք ընդունել նորանց մէջ:

Ես Մարդասիրական Ընկերութեան փոքրիկ անդամը լինելով, չունիմ դիտաւորութիւն քարոզ կարդալ Ձեր դլխին, և չկարծէք թէ ես կամենում եմ այսօր մի բանով հանդէս դուրս գալ անամօթաբար, այլ միմիայն նպատակս է, քանի որ աշխարհիս ժամանակաւոր ճանապարհորդութեան մէջն եմ, քանի կենդանի եմ, կարողանամ հետս տանել մի փոքրիկ պարշաւ այն է ծառայել իմ սիրելի ազգին, իմ հոգւոյս ցանկալի, երբեմն հոչակաւոր Հայկազեան տոհմին: Ազգին ծառայութիւն ցոյց տալը իւրաքանչիւրի պարտականութիւնն է ըստ կարողութեան, մէկը կծառայէ նիւթականապէս, միւսը բանիւ և խորհրդով և այլապէս: Ինձ չունիմ

այնքան հարստութիւն, որ բաժանեմ, և ո՛չ բարձր դիտութիւն, որ տարածեմ, այլ ինչ որ ունիմ ու չունիմ, ահա այս է, որ համարձակվում եմ այսօր Ձեզ հաղորդել։

Բանագէտ, փորձված և արի մարդը, հմուտ զեկավարի պէս ուղիղ ընթացք բռնած աշխարհիս անթիւ փորձանաց ալիքները ճղելով, աչքը յուսով հաստատած բևեռացուցի վերայ՝ կհետևի հասանել ի նաւահանգիստ։ Նա զուտհաւորված է այնպիսի առաքինութիւններով, որ ոչ կարճամիտ մարդկանց լեզուադարութիւնը և ոչ կոյր բաղդը կարողեն փոխել նորա ընթացքը, այլ միշտ համբերութեամբ և մեծահոգութեամբ յառաջ կրվաղէ անխոնջ, ծուլութեանը և մոլութեանը տեղի չտալով, որով կարողէ մարդ պարզ երես լինիլ Աստուծոյ և մարդկանց առաջին։

Երանի՜ այն մարդոյն, որ ճանաչում է իւր պարտքը, և աշխատում է կատարել դրան ըստ կարողութեան։ Երանի՜ հասակութեան, որոյ անդամքը միահոդի,

միաբան և միակամ են. նորա շինած տունը հաստատիմն է և նորա կանգնած սիւները միաւորված հաստատվածն Աստուածասիրութեան և եղբայրսիրութեան կապերով, ո՛չ հեղեղ ջուրց խառվութեան և ո՛չ սաստիկ հողմ հակառակութեան կարեն քայքայել նորա հիմունքը։

Այսպիսի քանի մի կատարեալ և փորձված հայեր վերին նախախնամութեան անհերևոյթ զօրութեամբը սիրտ առած, նոր հոգի ստացած, միաբանեցան քանի տարի առաջ, Մարդասիրական Ընկերութիւն կազմել յանուն սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի, Բազուայ մէջ։ Որովհետև այս արժանայիշատակ անձանց բարի դիտաւորութեան մէջ կար Աստուծոյ մատը, վասնորոյ նոցա ցանկութեան կարդ և կանոնը Ընկերութեան գործոց կառավարութեան համար շարադրած նախագիծը հասաւ մինչև Դուռն Ամենաողորմած կայսեր։ ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ ՐԱՐԱԿՈՑՆ հրամանաւ ի 21 Մայիսի 1864 ամի, հաստատեց այդ միաբանական Ընկերութիւնը, տալով նրան իրաւունք կրել

Լուսաւորչի տիտղոսը։ Յետ այսորիկ տարածվեցան կասկածանք և երկիւղ մի քանի սուտ ազգասէրների և հնամոլների մէջ այդ Ընկերութեան դէպի ապագայ վտանգը և կործանումն յառաջագոյն մարդասէր անալով. այդ տեսակ կարծիքով հեռանալով հեռանում էին ոմանք դրանից, որովհետև դորա մասին պէտք զոհէին իւրեանց նիւթականից։

Հասարակութեան պարարտ և կուշտ անդամը, հաւատացէք Աստուածէ ասում և ոչ ես, մարդկային կեանք չի վարում, եթէ նա անցուցանելով իւր կեանքը բիւրաւոր մեղաց տուռունքներով, իւր հոգւոյ աչքը փառամոլութեամբ և հարստահարութեամբ կուրացրած, աշխարհի անելանելի Բաբիլոնի մէջ մոլորված, ծառայում միմիայն իւր անձին, և նրանից ծնած մի քանի անդործ, լեութեամբ և փարթամութեամբ շռայլացած արձակերեան որդւոց համար է աշխատում, յայնժամ նա հասարակութեան կամ ազգային գործը յիմարութիւն և ցնորքէ համարում։

Ուր չկայ միաբանութիւն և անձնազոհութիւն, այնտեղ չկայ և կատարեալ մարդկութիւն։

Սակայն մեր նորահաստատ Ընկերութեան անդամքը այսպէս չէին, նորանք առաջին նուագում թէպէտ հանդիպեցան մի քանի դժուարութեանց, բայց համբերութեամբ և երկայնմտութեամբ կացին մնացին այնքան ժամանակ, մինչև որ անդամոց թիւը համաձայն 16-դ յոդ. կանոնագրութեան լրանայ, ապա թէ կարողանան ընդհանուր ժողով կազմել։

Այս անմոռանալի և ոսկեղի օրը հասաւ և ընկերութեան գործերի կառավարիչները յետ եօթնամեայ զանազան անյաջող դիպուածոց, 1870 թուականի սկզբում, տեսանելով որ Բաղդու զանվող անդամոց թիւը լրացած է արդէն, հրաւիրեցին շրջաբերականներով ընկերութեան բոլոր անդամներին։ Ընդհանուր ժողովը բացուեցաւ 'ի 25 յունվարի նոյն թուականի։ 40 անփոփոխ անդամոց ներկայութեամբը, յորոց շարքումը կային և հիմնադիրները, երեք տարի ժամանակաւ ընկե-

բութեան ժողովոյն Խորհրդոյ գործերը կառավարելու համար ընտրվեցան համաձայն 17-դ յօդ. կանոնագրութեան 'ի պաշտօն նախագահի Գերապնիւ Մովսէս Զօհրապեանցն և Խորհրդական Անդամոց Գերամեծար պարոնայքը՝ Ներսէս Սրապիոնիկեանց, Եղոր-բեկ Լալայեանց, Խրիմեան Հայրիկ Դանանեանց, Գրիգոր Թումայեանց, Յակոբ Աղբէսեանց, Յովհաննէս Տէր Յակոբեանց, Յովհաննէս Ղասապեանց և Մուշեղ Մէհրապեանց, 'ի տեղի վերջնոյս այսինքն Մէհրապեանցի, նորա բացակայութեան աղագաւ և համաձայն նորա յօժար ցանկութեամբ յայտնած հրաժարականի, միւս տարի, այսինքն 'ի 25 յունվարի 1870 ամի ընդհանուր ժողովով ընտրվեցաւ Ձեր փոքր եղբայր Սերկիս Միքայելեան Վարշամեանցն։

Ինչ գործ գործեցին այս նորընտիր նախագահը և իւր խորհրդակից Անդամները 'ի միասին, կամ թէ ինչպիսի միջոցների ձեռնամուխ եղան ընկերութեան գումարը շահելու և Անդամոց թիւը բազմացու-

ցանելու մասին յընթացս 1870 և 1871 ամաց, կարող է Ձեզանից իւրաքանչիւրը տեղեկանալ մեր Գերապնիւ նախագահի 1872 թուականի Արարատ ամսագրի միջոցաւ տպագրված հաշիւներից։ Բայց այժմ ցանկալի է ինձ Ձեր ուշքը դարձուցանել Անդամոց դէպի զբաղ խաւոր գործունէութիւնները, որոց պտուղը կարողանք տեսնել և աչքով։

Նախ, նոքա մոռանալով իրանց անձնական կարիքը, մեղուի պէս հայ հասարակութեան բանաւոր բուրաստանում թռչտելով այս ծաղկից միւս ծաղկի վերայ, աղաչանօք, խնդրանօք, շրջաբերական նամակներով, Աստուծոյ ողորմութեամբը կարողացան գտնել Անփոփոխ և Տարեկան Անդամներ։ 1870 թուականին 33 անձինք Անփոփոխ Անդամներ և 1871 թվին 18 Անփոփոխ և 52 տարեկան Անդամներ։ Մինչ ց 25 յունվարի 1870 ամի այսինքն ընդհանուր ժողով կազմելը՝ ընկերութիւնը ուներ 54 հոգի Հիմնադիր և Անփոփոխ անդամներ։

Երկրորդ, թանգարան և գրատուն բա-

ցեղին ժողովելով նորանցում զանազան ձեռագիր և տպագրած հին գրքեր և այլն։

Եւ երրորդ, մեր Վեհափառ Կաթուղիկոսի թոյլտվութեամբը տեղւոյս նորաշէն Մայր Եկեղեցւոյ բակում կառուցին այնպիսի շինութիւններ, որոց մէջ տեղաւորվումեն այժմ ծխական և օրիորդաց ուսումնարանները, տպարանը, մատենադարանը և Առաջնորդարանը։ Այս շինութիւններովը, որոց վերայ ծախսէ եղել 7715 ռուբլի 93 կ. առաջը առին այն ծախսերի, որ պիտի գործ դնվեր քաղաքին մէջ զանազան տեղերում դպրոցները և տպարանը տեղաւորելու համար վարձելով զանազան մարդկանց տները։

Բայց ինչ որ վերաբերում է 1872 թուականին, ցաւոք սրտի պիտի խոստովանիմք, որ Խորհրդական Անդամներից անկախ հանգամանքները զրկեցին նորանց այն միջոցներից, որոնցով որ, բացի դրամական գումարը շահելու ուսումնարանաց և միւս գործերի կառավարութեան համար պէտք է ցոյց տային և առաւել օգտաւէտ գործունէութիւններ, և վերայ այսր ամենայ-

նի նոքա 1872 թուականի ընթացքում կարողացան գտնել 8 Անփոփոխ և 42 տարեկան Անդամներ, որոց անմոռանալի անունները կամենում եմ յիշել այստեղ։

Անփոփոխ Անդամներ

1, Թէմական Առաջնորդ Անդրեաս Եպիսկոպոս.
2, Իշխան Գապոլիոն Ամատունի.
3, Աստիճանաւոր Ամբաղում Վերմիշեանց.
4, Կապիտան Սարգիս Դանիէլեան Իւզբաշեանց.
5, Կոստիկ գիւղացի Մարդին Իգնատեան Կոկոեանց.
6, Իվան Մովսէսեան Միրզա-Աւագեանց.
7, Գէորգ Զայկեշտեանց.
8, Ներդործական քաղաքական խորհրդական Պաւել Մելիք-Իշխէլարեանց։
9, Խաչատուր Կիրիեանց.

Տարեկան-

1, Խորէն Վարդապետ Ստեփանէ։
2, Վահան Վարդապետ Բասդամեանց
3, Նահակ Վարդապետ Բաղդասա-

րեանց.
4, Յովհաննէս Յովհաննց.
5, Աճատուր Ամնասարեանց.
6, Աղէքսանդր Մելիք-Աղարեանց.
7, Եդոր Իվանիչ Երուսալիմսկիյ.
8, Վասիլ Ակիմեանց.
9, Երևանու ք. Պուլի Համբարեանց.
10, ‥ Վ. Կամնարական.
11, ‥ Իշխանով.
12, ‥ Կոլեժսկիյ Ասէսոր, Պորշանեանց.
13, ‥ Կապիտան Ամիրխանով.
14, ‥ Կոլեժսկիյ Ասեսոր Խանաղիով.
15, ‥ Աննայ Բայարդենայ.
16, ‥ Օհանեանց.
17, Նադվորնիյ Սովետնիկ Եփրեմ Դեհ-
կարիանով.
18, Յովհաննէս Ամիրաղեանց.
19, Միքայել Տէր Դաւթեանց.
20, Գրիգոր Տէր-Յակոբեանց.
21, Գրիգոր Սուրկանեանց.
22, Յարութիւն Պամաղեանց.
23, Յովհաննէս Բարանեանց.
24, Իշան Նիկոլայ Երզրութինսկիյ.

25, Գրիգոր Հարոյեանց.
26, Նիկողայոս Հանշեանց.
27, Ստեփան Հարոյեանց.
Ընդեալ տարվայ տարեկան Անդամները,
որոնք և ներկայ 1873 թ. գրվեցան:
28, Յարութիւն Պոպովեանց.
29, Յովհաննէս Մայիլեանց.
30, Կարապետ Քոչարեանց.
31, Գէորգ Քուրքչեանց.
32, Համբարձում-բեկ Իւղբաշեանց.
33, Յակոբ Մեհրաբեանց.
34, Մարտիրոս Վասիլեանց.
35, Սարգիս Զարդարեանց.
36, Յակոբ Տէր Իսրայելեանց.
37, Գրիգոր Տէր Իսրայելեանց.
38, Յակոբ Փիրզադեանց.
39, Յովհաննէս Սերկիսեանց.
40, Յարութիւն Հահնազարեանց.
41, Մաթվէյ Մեանիկով.
42, Յովհաննէս Մելքումեանց.
43, Աղէքսանդր Սէրկիսեանց.
44, Անտոն Համատէ.
45, Յակոբ Բաբախանեանց.
Մեծարգոյ Անդամք և ցանկալի բա-

բեկամք, որովհետև այսօր մեր Նախագահի և Խորհրդական Անդամոց երեք տարվայ պաշտօնակատարութեան անուի շրջանը դադարումէ, ուստի պարտաւոր ենք համարում մեզ զգուշացնել Ձեզ, որ Մարդասիրական ընկերութեան գործերը կառավարելոյ համար պիտի ընտրվին այսօր մարդասէր և գործունեայ Անդամներ:

Այս երեք տարվայ փորձը մեզ ցոյց տուեց, որ մի այդպիսի հռչակաւոր Ընկերութեան Անդամութեան սրբազան պաշտօնի համար՝ պէտք է ընտրվին ազգասէր և քրիստոնէի կեանք վարող անձինք. եթէ կամենում ենք իմանալ թէ ինչ դաղափարի տէր անձինք պէտք է լինին, այնպիսիք, որոնք չեն կարողանալ հանդիսաւ լինել իրանց խղճի առաջ, մինչև որ մի եղբայրասիրութեան պտուղ ցոյց չտան ամենայն օր, այնպիսիք, որոնք ազգային գործը հարկաւորագոյն կհամարին քան թէ իւրեանց սեպհական գործերը, և վերջապէս այնպիսիք, որոնք իւրեանց զանազան նեղութիւններով ժողովված հարստութեանը

տալիս են մի նախանձելի նշանակութիւն, ոչ թէ այն երկրոտ մեծատանց պէս որ ինչքան շատանում են պարգևներով, այնքան քարասրտանում են և երկրոտ և անցոյս մարդոց պէս իւրեանց քսակների բերանը պինդ կապում, որ մի գուցէ դուրս թափվին նրանցից առատասրտութիւնն և մարդասիրութիւն, կասկածանօք երևակայելով նրանք իրանց ժառանգների ապագայ թշուառութիւնը:

Մեր Նախագահը իւր Խորհրդակից Անդամներով այն անսուտ և անհերքելի փաստը 'ի նկատի ունենալով և Ընկերութեան օգուտը իւրեանց սեպհական օգտից առաւել համարելով, խնդրումեն Ձեզանից, ընտրողութեան ժամանակին, անձնասիրութիւնը, մարդելուզութիւնը կեղծաւորութիւնը մի կողմը դնել, նոքա լաւ հասկանումեն, որ եթէ դուք ունէիք իրաւունք ընտրելու նրանց ազգային գործի համար, այսօր էլ ունիք իրաւունք արձակելու նրանց միևնոյն գործոյ օգտի համար:

Եւ որովհետև ամենահարկաւոր ծա-

խուց առաջը առնելու համար՝ ընկերութիւնը արդէն վերջացրել է վերոյիշեալ շինութիւնները, որով համարեա թէ կատարելագործել է Ընկերութեան նպատակների գլխաւոր մասը, որոյ օգուտը շատ տարիներից յետոյ միայն կարող են զգալ նորա անդամները և տեղւոյս հասարակութիւնը, և որով, որպէս թէ նորընտիր անդամոց ուսերից վեր են առել նրանց պարտաւորութեանց ծանրագոյն բեռնը, ուստի այս վերջիններիս համար մնում է ինչ, եթէ ոչ կատարել յետագայ պայմանները միայն։

Նախ. Ամանաձայն ԲԱՐՁՐԱԳՈՅՆ հաստատեալ կանոնագրութեան յետ լրանալոյ իւրաքանչիւր երրորդ մասին տարւոյ կամ տրէտի, անդամը պարտաւորուն իւրեանց հայեցողութիւնը դարձուցանել այն առարկայի վերայ, որ Ընկերութեան դումարներից գանձապետի մօտ պահվի այնքան, որքան Խորհրդի նկատողութեամբ և նախատեսութեամբը հարկաւոր կհամարուի ընթացական ծախքերի համար դործ դնել. իսկ մնացած դումարները փոխ դրվին մաս-

նաւոր անձանց ապահով եղանակաւ կամ միով բանիւ շահեցնել ինչ եղանակաւ որ Ընդհանուր միաբանական Խորհուրդը յարմար և օգտաւէտ կհամարի։

Երկրորդ, նիստերի համար որոշված օրերում Ընդամք պէտք է գանվին ժողովում։ Իսկ եթէ պատահեց մի այնպիսի հարկաւոր դործ, որ չկարողանանք բիայանալ այն ժամանակ պէտք է անպատճառ յայտնեն Ընդհանուր, որ դրա, եթէ կանոնադրված ձայները կամ Ընդհանուր թիւը թէ լրացած է կամ պակաս, 'ի զուր տեղը չըսպասեն նրան։ Այսպիսի դիպքեր եթէ պատահելու լինին յանձնախումբ, և քայլ Նախագահից, որ միշտ լինելու է, եթէ անդամներից մեկը դոնէ ամիսը մեկու անգամ էս չկարողանայ դալ 'ի Խորհուրդ և չյայտնէ ոչ մի պատճառ, յայնժամ ժողովը, իւր գործունէութեան կարդը օրինաւոր կերպով պահպանելու համար, պարտաւոր է օրագրութիւն շինել այս մասին և իւր տարեկան հաշուհանդիսում յիշել 'ի դդուշութիւն Խորհրդական Ընդհանուր և բոլոր Ընդհանուր ընկերութեան,

(498) 28289-62

որովհետև ճշմարտութիւնը և ընկերութեան օգուտը այսպէս է պահանջում։

Երրորդ. Որովհետև նիստերը կազմվում են ոչ թէ միայն թղթեր ստորագրելու և անձնական գործերի վերայ խօսակցելու, 'ի զուր ժամեր անցուցանելու, ինչպէս նշմարել է մեր Գերազնիւ Նախագահը այս պակասութեան մասին Ընդամոց կողմից, և քանիցս յանդիմանել է ոմանց, ուստի անդամք մինչև ժողովելը և նիստ կազմելը, պէտք է իւրեանց հետ բերած բոլոր անձնական գործերը և հոգսերը դուրսը թողնեն և ապա սկսեն իւրեանց խորհրդակցութիւնը ընկերութեան պատկանեալ գործերի և յառաջադիմութեան վերայ։

Չորրորդ. Ես այդպէս համոզված եմ, որ իւրաքանչիւր բարեմիտ և խելօք վաճառականը մեր մէջ՝ ինչպէս իրա առևտրական գործերում կարողանում է մտածել խորհել աւելի ևս շահաբեր գործերի համար, նոյնպէս կարող է, եթէ ցանկանայ եթէ բարեգործական սէր ունենայ, և անդամ ընտրվելուց յետոյ մտածել առա-

ջարկել և խորհրդակցել միևնոյն միջոցները Ընկերութեան դրամական մասը բարեբաղդելու համար։ Իսկ որ ինչ կվերաբերի ժողովոյն Խորհրդոյ գործառնութեան կամ գրականական մասին, Ընդամք ազատ են այս վերջին պարտաւորութենից. միայն ընտրողութեան ժամանակը պիտի չմոռանաք, որ Նախագահի և Ատենադպրի պաշտօնները կառավարելու համար, այնպիսի անձինք են հարկաւոր, որոնք պէտք դիտենան՝ այոց և Ռուսաց լեզուները եթէ ոչ կատարելապէս, գոնեայ չափաւորապէս։ Հատ բաղդաւոր կլիներ ընկերութիւնը, եթէ ընտրված անդամներից մի քանիսը լինէին մեր սիրելի հարուստ՝ այերից այսինքն այնպիսի հայերից, որոնց մասին յառաջադոյն յիշեցի և որոնց սրտերում եռութիւնը և արծաթասիրութիւնը այնքան խոր արմատ չի քցել։

Օրինակի համար, ասենք թէ ընկերութիւնը այսօր ունի առ ձեռն պատրաստի 200 հազար ռուբլի, ասացէ՛ք խնդրեմ, ինչ օգուտ պիտի քաղէ մեր ազգը,

եթէ այնպիսի մեծաքանակ դրամոց գումարը Ընկերութեան հոգատարձուքը չկարողանան գործ դնել օրինաւոր կերպով։ Այսպիսի դրամագլուխներ շատ անխոհեմ և անզգուշ մարդկանց քսակներից 'ի զուր տեղը անդադար անհետանում և 'ի չէք են դառնում, կրկին ժողովվում և դարձեալ վատնվում և մեացորդը լինում է ոչ ինչ։ Ուրեմն ամենայն գործ կամ ձեռնարկութիւն աջողակ կերպով չեն ընթանալ, եթէ սոցա կառավարիչները իմաստուն և փորձված չլինին։ Հատ անհերքելի ապացոյցներով հաստատվածէ, որ խոհական և քանքարաւոր անձինք փոքր բանով շատ մեծ գործեր են կատարում յօգուտ մարդկութեան, քան թէ կոյր բաղդի որդիքը իւրեանց հարստութենով։ Մեր ընկերութեան գլխաւոր նպատակը այն չէ, որ ամենայն տարի նորա Անդամքը երեսներին քօղ քցած, դանձանակը ձեռներին առած մուրանան և խունկ ծխեն սորա կամ նորա խիղճը զարթուցանելոյ համար, երեք նկանակ փոխ ուզող բարեկամի յուսովը,

որ եթէ բարեկամութեան համար չտայ, գոնէ խղճալի անդամոց թախանձանքին համար պիտի մին բան տայ, որ մին կերպ նոցանից ազատվի։ այլ նորա նպատակը այն է, որ շատ դարերով քարուքանդ եղած և Քրիստոնէական սկզբունքներից զրկված մեր ազգի հոգեկան շինութեան գոնէ մի անկիւնը, կարողանայ ուղղել, այն է Լուսաւորութիւն տարածել։

Կարծեմ մեր մէջ չգտնվի այնպիսի անձը, որ հենց մտքով անցկացնէ, թէ էս ի՞նչ ցաւ գառաւ մեր գլխին Լուսաւորչի՜ն, Լուսաւորչի՜ն բառը. մի՞թէ մեր որդիքը պակաս ուսում են ստանում զանազան ուսումնարաններում։ Եթէ գտնվի մի այդպիսի հայ անձն, յայնժամ Ընկերութիւնը կարողէ համարձակ ասել թէ չկայ մեր մէջ կատարեալ Լուսաւորութիւն ըստ նշանակութեան բառիս։ Մեր ազգայնոց մի քանի անհատներին, բարձրագոյն ուսումնարաններում ստացած վկայագիրը բաւական չեն վերանորոգել կամ բժշկել մի այնպիսի վերք, որը արդէն խոր արմատացած է. այսպիսի վերքերի համար մեր

ազգի որդիքը չեն կարողանում գտնել սպեղանի (մահլամ) դժուարամարս դիտութիւններ մատուցանող դպրոցներում: Այս խնդիրը առաջին նուագում որքան դժուար է թուում մեզ լուծանելը, այնքան հեշտանում է, երբ որ համեմատում ենք Հայաստանի հին հեղինակների աշխատանքը և նոցա աշխարհաքարող սրբանուէր կեանքը, այս վերջին ժամանակներում դուրս պրծած նորածնութիւն սիրող, նոր Լուսաւորչին քարոզող անձանց հետ, որպէս թէ հին Լուսաւորչին հնացած հանդերձի պէս պիտի վերանորոգվի:

Դուք հիմիկ իրաւունք ունիք հարցանել ինձանից թէ մեր որդիքը որպիսի ուսում պիտի ստանան, որ Լուսաւորվին: Այս հարցին պատասխան տալու տեղ, ես կինդրեմ Զեզանից, 'ի միասին դնանք մնենք մեր տնեքը և տեսնենք, թէ արդեօք, թագաւորում է նրանց մէջ այն կեանքը և մխիթարութիւնը, որ չէ յաղթահարվում ոչ չքաւորութենից, ոչ սովից, ոչ մերկութիւնից, ոչ հիւանդու-

թիւնից և ոչ մահից: Դուց է ես սխալված եմ և անդիտակցաբար վայ եմ կարդում իմ և ձեր գլխին, գուցէ այն խաւարը և մառախուղը միայն իմ տանս է թագաւորում. բայց աղաչում եմ և պաղատում, ցոյց տուէք ինձ այն խնկելի տունը, որոյ անդամքը, թէ և լինին հենց ամենաբարձր դասատներում կատարելագործվածներից, ճշմարիտ քրիստոնէի կեանք լինին վարում, (եթէ հասկանում եք ինչ ուտելի կերակուր է և ինչ համ ունի այս ճշմարիտ քրիստոնէութիւնը), որ մեղուի պէս, սուրբ գրեանց մէջ եղած անուշահոտ ծաղիկներից անդադար նիւթ լինին ժողովելիս և քաղցրութիւն-ծորելիս, երանց սուրբ ամուսնական կապով այրուկին իւրեանց շուրջը առած որդիներին, նոցա փափուկ սրտերում սերմանում լինին Աստուածային հոգեհանգոյց պատճառող քարոզները:

Եթէ, սիրելիք, մեր ազգի մէջ հաղիւ կճարվի մի այդպիսի տուն, ուրեմն, ինչ է գլխաւոր պատճառը, որ մեր ընտանեաց հոգեկան կամ բարոյական մասը աւերակ

դարձած խոպանացած է, և մեք մի կողմը թողնելով այդ երջանկութեան հոգսը, առաջին քայլը, որպէս թէ ապահովութեան և անարկիւղ կենցաղավարութեան, փոխում ենք մի այնպիսի ճանապարհի վերայ, որ տանում է դէպի տանջանք այս աշխարհում, և ի կորուստ յետ մահուան, այսինքն ցանկանում ենք որպիսի և իցէ հնարիւք հարստութիւն ժողովել, և մեր կեանքը հեշտասիրութեան մատաղ անելով, բարձի թողն ենք անում մեր զաւակները, որոնք զարգանում են երկնից կամարի տակը, ծծելով անարևոյթ թշնամոյ աշխարհի երեսով սփռած դառնաշունչ շողերը, դերի դարձած իւրեանց շուրջը պատող հանդամանաց, պատահմանց, ի վերջոյ և սպառվում արձակերեսան ընկերակցաց չար ներդործութիւններից։

Մինչ բացայայտելը այդ խնդրի, կրկին աղաչում եմ, գնանք մտանենք մի մահմեդականի տուն, որի երակներում և արեան մեջ հիմնաւորապէս հաստատվածէ այս օրէնքը թէ „կատարի՛ր բնութեանդ

պահանջները, սիրի՛ր քո անձդ միայն, կանանցդ խորոսդ՝ին (հարամ խանէն) զարդարի՛ր, տուն շինէ և գանձ ժողովէ անարկիւղ, որովհետև Մահմէդը իւր դերկը բացած ընդունում է նրանց միայն, որոնք Մուսուլման են կոչվում։։ Այդպիսիների տան պատուհանից Ձեր ականջները կլսեն միշտ բանբասանք, ոխսարանութիւն, անդադար և անտեղի երդուել, կեղծաւորութիւն, խաբերայութիւն, ստաբանութիւն, վէճ, պատերազմ, նախանձ, տոչորութիւն և անասելի հայհոյանք և այլնիսկ իրանց աղօթատեղում անդադար ծնրադրութիւն, արտաքին բարեպաշտական ձևեր, այնպէս որ, եթէ այդ ազգի մէջ մի յեղափոխութիւն չի ծնանի, նա յաւիտեան պիտի մնայ կուրութեան մէջ։ Այս բնութենական ախտերը ծնանում են ինչից, եթէ դուք մի պատճառ իմանում էք, ասացէք. բայց ես իմ կարճ մտօքս շատ օրեր քննեցի և այս միայն կարողացայ եզրափակել, որ այդպիսիների հոգին հակվածէ դէպի երեք սիղբունք այսինքն դէպի կրօնամոլութիւն, դէպի

ուսումնատեղութիւն և դէպի արծաթասիրութիւն. սակայն պէտք է զարմանալով խոստովանեմ, որ նոքա ունին եթէ ոչ ներքին, գոնէ արտաքին կապ միաբանութեան:

Այժմ խոնարհաբար դիմում եմ դէպի Ձեզ խնդրանօք. դուք ինքեանքդ հաշիւ տուէք Ձեր խղճին և պատասխանեցէք Ձեր ներսի մարդոյն, թէ արդեօք ինչ տեսաք կամ ինչ էք տեսնում միշտ այս երկու ազգայ տնային կամ քաղաքական կեանքում, բացի ուտել խմելուց և քնելուց, որոց մասին բան չունիմ խօսելու, սրանց արք և կանայքը ուստերք և դստերքը, ինչով են միմիանցից զանազանվում, կամ Հայ ծոյլ և մեռեալ հաւատով քրիստոնեայն, կրօնամոլ մահմետականից ինչով է դերազանցում: Խնդրում եմ այս բանի վերայ մտածելուց յետոյ և մի՛տք բերէք արդէն մեր մէջ սպրտած ներս մտած նորաձևութիւնները (մոդան), զոր օրինակ շռայլ հանդերձը, թղթախաղը, սուտ քաղաքականացեալ դիշերային ժամավաճառը և այլն. եթէ օրանց կարե-

լիք համարել արտաքին ևս ուղղութիւն և ոչ գայթակղութիւն, և յետոյ եթէ դտիք մի անմանութիւն այս երկու ազգաց մէջ, յայնժամ ունիք իրաւունք իմ գլխին կրակ մաղել: Բայց մինչ դատապարտելը, աղաչում եմ երկայնաբութեամբ քննեցէք այս խնդիրը, ձեր մտքերի առաջը բռնած արքայութեան ճանապարհը հեռուից մօտեցնող և հայելու պէս մեր բոլոր պակասութիւնները ցոյց տուող քրիստոնէական և մարդկային բարոյական կենաց ուղեցոյց սուրբ Աւետարանը:

Սիրելիք, այժմ կամենում եմ աղաչել Ձեզ իմ շատախօսութիւնից, որովհետև հենց իմ ներսի մարդն էլ վկայում է ինձ, այս մտքով թէ վարդապետ չես: Բաւականէ ինչքան գլխացաւանք տուիր, վերջացրու խօսքդ:

Եթէ այդպէս է, ուրեմն լսեցէք: Դուք ինձանից լաւ գիտէք, որ իւրաքանչիւր շինութիւն, տուն, եկեղեցի և այլն պէտք է սկսվի հիմքից· մի տան հիմքը եթէ ամուր չլինի նորա սիւները կամ պատերը հաստատ չեն կարող կանգնել: Վերևը ես

ասացի թէ մեր Ընկերութեան գլխաւոր նպատակն է Լուսաւորութիւն տարածել և քանի խօսքով բացայայտեցի, թէ Լուսաւորութիւնը շատ լեզուներ և գիտութիւններ սովորիլը չէ միայն, որերը շինութեան նիւթերն են, չգիտեմ համաձայնեցիք ինձ հետ, թէ ոչ, եթէ ձեր կողմից կայ մի մասնաւոր կարծիք, թոյլ տուէք աւելացնեմ, որ շատ գիտութիւններ մինչև անգամ և փիլիսոփայութիւնը կարող են ուղղել մեր բնութեան վատ ձգտողութիւնները միայն և շինել բարի մարդ երևութապէս, բայց քիչերն են գտանվում միևնոյն դիտականներից, որ համալսարաններից արձակված լինին բարի քրիստոնեայ. այս հարցը շատ հեշտութեամբ կլուծէ այն մարդը միայն, որ աշխատումէ տքնում է ուսանիլ մի այնպիսի իմաստութիւն, որ առանց մի դժուարութեան, առանց որպիսի և իցէ հնարից շինում է մարդոյն բարի մարդ և բարի քրիստոնեայ, և այս իմաստութիւնը սովորելու համար հարկաւոր չէ մեծամեծ արհեստների և դիտութիւնների ձեռնամուխ

լինիլ և տարիներով այս ճեմարանից միւս ճեմարան փոխվիլ, այլ ամենայն քրիստոնեայ յառաջագոյն պիտի սովորի այն դասը, որն որ ամենիմաստ Ստուծոյ Որդին՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսը իւր աշակերտների ձեռով մեզ աւանդեց ասելով ,,Ուսարո՛ւք ինէն, զի հեզ եմ և խոնարհ սրտիւ և գտջիք հանդիստ անձանց ձերոց''.

Ահա՛ մեր ցանկացած Լուսաւորութեան հիմը և նորընտիր Ընդամբ եթէ իւրեանց բարեգործական ասպարիզում հեշտութեամբ ընթանալ և պտուղ ցոյց տալ կամենան, պէտք է սովորեն իւրեանք լինիլ նախ հեզ, խոնարհ սրտիւ և ապա արօրի մաճից բռնած մեր ազգի չքաւոր, որբ և անտերունչ մանկանց հոգեկան երկիրը հերկելով միջոց գտնեն մի այդպիսի Լուսաւորութիւն սերմել համբերութեամբ, խոհեմութեամբ և մեծահոգութեամբ, ինչպէս ճառիս յառաջաբանութեան մէջ ասացի, յուսալով, որ կ'գայ ժամանակ, ազգը կվայելէ նրանց աշխատանաց պտուղը:

Այժմ շատ կարելի է Զեզանից շատերը

ոմանք կմտածեն և դուցէ կյանդիմանեն ինձ, ասելով թէ „այս ամէնը մեք գիտենք, բայց դու պատմի՛ր թէ ինչ՞ է պատճառը, որ մեր ազգի որդիքը բարի մարդ լինիլ կարողանում են, բայց բարի քրիստոնեայ ոչ“.

Ազատեցէ՛ք, աղաչում եմ, ինձ այս հարցից, որովհետև այս խնդիրը իմ տկար զօրութեամբս և դիտութեամբս եթէ սկսեմ մանրամասն բացայայտել, հաւատացէք, որ պիտի մոլորվիմ և չեմ կարող դուրս գալ մի այնպիսի անելանելի լաբիրինթոսից, որի մէջ 'ի վաղուց հետէ մինչ ցօրս շրջվում են շատ հռչակաւոր դիտնականներ. բայց դուք ինձ լաւ էք ճանաչում և շատ լաւ դիտէք, որ իմ խելքի բան չէ, սակայն ցանկանում և աշխատում եմ տմարդի չերևալ ձեր աչքին, որովհետև ունիք իրաւունք ինձանից պահանջելու, որ գոնեայ երկու և երեք խօսքով վերջացնեմ և բացայայտեմ ընկերութեան գլխաւոր նպատակների հարցը։

Գլխաւորապէս իմ խօսքը նոր ընտրվող Անդամոց վերաբերմամբ է, որոց պիտի

յանձնվի այսօր Ընկերութեան շինութիւնները, կայքը, գործերը և ուսումնարանները։ Այս ամենը ստանալուց յետոյ ես նրանց յիշողութիւնը կամենում եմ դարձուցանել ընկերութեան մի փոքրիկ բուրաստանի վերայ, որ է օրիորդաց ուսումնարանը։ Այս փոքրաթիւ քնքոյշ սեռը այս քանի մի աղքատ դերատատաններից ժողոված դեռափթիթ բանական ծաղիկները մեր հասարակութեան աչքում մի աննշան բաներ են երևում, մոռանալով, որ դորանք են աղբիւրը և պատճառը մեր ծնողեան, կենաց և կատարելագործութեան բնականապէս. սրանցից են ծնանում թագաւորներ, իշխաններ և ժողովուրդք. բայց մեծ զարմանքը այն է, որ և երկնից արքայութիւնը պիտի թափուր մնար, եթէ դորանցից չի ծնանէին, նահապետք, մարգարէք, առաքեալք և սրբոց դասք։ Նոցա գրկերը և ստինքը պէտք է սնուցանեն ազգի և եկեղեցւոյ հարազատ ժառանգներ, միով բանիւ նրանք պէտք լինին սիրելի և պարկեշտասուն մայրեր բարոյական զաւակների։ Եւ ընդհակառակը

բացվում է մի տրտմաբեր տեսարան, որից դարձեալ դուրս է գալիս մեր ղգալի աշխարհը պատող մառախուղ, ալեկոծութիւններ, եղեռնագործութիւններ, ողբեր, յաւեր, ինչ տանջանք, ինչ կոիւ, ճիչ, աղաղակ, ինչ հարուածք, պատերազմ, սրածութիւն, ինչ թշնամութիւն և անմիաբանութիւն ազգաց և ատելութիւն 'ի մէջ միմեանց եղբարց։ Այս ամենը ծնանումեն, սիրելիք, միևնոյն աղբիւրից, այսինքն մայրերից, միևնոյն կեանք պարգևող մայրերից։ Տեսէք, ինչ մեծ դեր է խաղում կանանց սեռը, և ինչ մեծ նշանակութիւն և ներգործութիւն ունին նոքա մեր դոյութեան և կենցաղավարութեան մէջ, 'ի վերայ այսր ամենայնի, մի այդպիսի արմատական էակը, մարդու կենակիցը, սիրոյ և միսիթարութեան առիթը, այսօր աչքից քցած, իրաւունքից զրկված, այրիութեան սև զգեստը հագած, կորագլուխ, սրտաբեկ, անմխիթար անցուցանում է մերձ 'ի մահ հիւանդի պէս, իւր կեանքը, և մանկան պէս խաբված մի քանի տգեղուն հիւլիքներով և աչք խաբող պաճուճանքներով,

ճնում է խաւար վիճակում։

Գիտեմ, այս վերջին կծողական բառերը պիտի դիպչին շատերի պատուին, որոնք արդարև շատ գոհ են իրանց վիճակից. որոց կանայքը և օրիորդները, 'ի շաբաթ որոց և հենց իմը, ոչ ուժգոհութիւն և ոչ թողոք չեն յայտնացանում, այլ ըստ իւրեանց խոհեմութեան, սամթհատութեան և համբերութեան հետևում են դուրս չգալ այն սահմանից, որը ցանկապատած են մեզ հանդ և կոյր ազգերից աւանդած նախապաշարմունքներով։ Արդարև այդպիսի կանանց համար, որը զարդարված են միայն մարմնով, որոց ներսի աշխարհը դատարկ, հոգւոյ ականջները խուլ, չեն ճանաչում հոգեկան նորոգութիւններ և միսիթարութիւններ, լաւ է մնալ մի և նոյն դրութեան մէջ սահմանափակված, քանի ներկայ քաղաքակրթութեան (цивилизація) տարափոխիկ անհիմն խոստմունքներին խաբված, կրթութեան կեղծ պատրուակաւ մի անսովոր քայլ յառաջ տանելով, գլորվին վհի մէջ, որ ներդութեամբ պատրաստվում է անկոհեմ և անբա-

րոյական, իրանց քաղաքակրթուած և կատարելագործված յայտնող երիտասարդներից։

Վերևը ասացի, որ մեր ազգի կնայքը, որպես վկայում են և օտար ազգաց հեղինակները, բնականապես ծնկաձև այսինքն ամբիծ, ողջախոհ, տակուն և ամենայն նեղութեան համբերութեամբ տանող են։ Այս անգին և հաղուագիւտ մարգարիտները նրանց բնաւորութեան մէջ անկորուստ պահելու համար, հարկաւոր է զգեստաւորել նորանց մի այլ լիմն զարդարանքով կամ վերանորոգութեամբ, որ լինի համեմատ այն նշանակութեան, զոր ստացել են նոքա իւրեանց Ստեղծողից։

Այն զարտուղի ընթացքին, որին հետևումեն մեր ազգի մեծատանց կամ միջակ անձանց ընտանիքը, ոչ թէ օգուտ չէ բերում իւրեանց փափկասիրութեան հորինումը ոչ իրանց հոգւոյն և ոչ մարմնոյն, ոչ տղաներին և ոչ աղջկանց և ոչ հասարակութեան, այլ ընդ հակառակը իւրեանց ոսկեղօծ, նորաձև (мода) զոյն զոյն հանդերձներով, զանազան զանազան

կուռ մանեակներով, և զանազան հարուստ զարդարանքներովը որպէս մի տարափոխիկ ցաւ են քցում իրանցից ստոր, աղքատ և թշուառ երիտասարդների և երիտասարդուհիների մէջ, որոնք դիշեր ու ցերեկ քրտինքը ճակատներում, հաղիւ թէ կարողանում են իրանց օրական ապրուստը գտնել։

Այդպիսի արտաքին վերանորոգութիւն, 'ի տեղի շինութեան լինում է գայթակղութիւն և զրկանաց առիթ։ Հայլութիւնը փարթամների հասարակ մարդկանց և անկիրթ կանանց համար վատ օրինակ դառնալով Եվրոպատան հրային փրփուրի պէս հոսելով այրում են մեր խղճալի և թանգ գնով գնված ազգի ստորին դասը։

Բայց ե՞րբ և ի՞նչ հնարքով կստանան մեր ազգի որդիքը մեր ցանկացած վերանորոգութիւնը։ Զգիտեմ։ Եւ հարկաւորէ արդեօք մի այդպիսի վերանորոգութիւն, որոյ մասին Քրիստոս շատ անգամ տեսնում էր տհաճութիւն և չարախօսութիւն իւր վերայ Իսրայէլացւոց գրիչներից և փարիսեցիներից։ Անկասկած եմ, որ ամե-

նայն մարդ, թէ կրթեալ և թէ անկիրթ, եթէ աներկմիտ հաւատում է, որ մեք բաց 'ի մարմնոց ունինք և հոգի, կարող է վկայել թէ հարկաւոր է։ Եթէ հարկաւորէ, ուրեմն անցնում է ժամանակը, որ պահանջում է մեր փոքր 'ի շատէ կրթուած երիտասարդներից և երիտասարդ ուհիներից, որ մինչդեռ մեր ազգի մեծ մասը տգիտութեան խաւարում խարխափում է դես ու դէն, փոխանակ նրանց խաւարից և խաւարային նախապաշարմունքներից ազատելու լրանց առաքինական, բարեպաշտական և բարոյական օրինակներով, չխրթնացնեն նրանց դէպի աւելի թանձր խաւարը լրանց անբարոյական օրինակներով և շռայլ կենցաղավարութեամբը *), որին

(*) Մեզանում երանց նշանաւոր անուանով շատ երիտասարդները անպատուելի են համարում ձեղելը երանց մանկական կրէերը, օրինակի համար ասելիք, երեսուած էլ չեն ասել երանց, եթէ առանց նստելու գնացին յերեսոյթների, առանց գլխարկի յերեսփոխի և պրպատոպ պարկեշտ մարդի մոտ

շատ շատերը կուրօրէն հետևում են կարծելով թէ Լուսաւորութիւն բառի նշանակութիւնը իսկ դորանցումն է, պարունակվում, բայց չգիտեն, որ ոչ թէ միայն լրանց նիւթականին, լրանց անձին ու հոգւոյն են վնաս բերում, այլ լրանց շրջապատող խղճոյկ ազգակիցներին և ընկերակիցներին, աղքատութեան և թշուառութեան առիթ լինելով նորանց։

Ուստի, սիրելի անդամներ, բարի հիմանվերայ հաստատելով Ձեր կամքը, ամենից առաջ ձեր Ջանքը և հոգը պէտք լինին այդ բանաւոր բուրաստանում ուսանող քնքոյշ օրիորդաց բարոյականութեան վերայ բարոյական և խոհեմ ուսուցիչների ձեռքով, որոնք կարող են նորանց բերա-

գան հրապարակում կամ հանդիսանների մէջ գոյանալն, հինգնոյն ժամանակ թիատրոնը կամ գլանակը, որ մի պաշտելի և ասվերական բան է պատել, հարկաւոր է, եթէ յանկուինն էլ դեպ ծիսելու, ետեղանում պարպատոպ անենալ։ Առանձնապէս նիզնիկները, որի շատ պետականներին անգէպ լինելնները դարձնել

նում՝ քաղցրացուցանել Աստուծոյ խօսքերը, ապաւորելով նորանց սրտերում սպասող սուրբ պարտաւորութիւնները, զգուշացնելով այն փոխ սովորութիւններից և նախապաշարմունքներից, որոնցով շրջապատած են մեր կեանքը։ Անկասկած հաւատացէք, որ միայն աշխարհային գործութիւնները առանց հոգևոր ուսման ոչ մի բարութիւն չեն խոստանում։ Իմացէք ամբողջը, որ այս հոգւով կրթված օրիորդներից կլինին այն բարեպաշտուհի մայրերը, որոնք կնուցանեն իւրեանց զաւակները՝ ի ծննդենէ ոչ միայն մարմնաւոր կարգամբ այլ և հոգևոր, և ապատ ժամանակները կանցուցանեն նորանց հետ քրիստոնէական կեանքից առած հոգի զմայ-

---

ամօրն են հասարակաց երանց երկնաւորեան, և որոց մասին, Ռնաւորեան օրէնքին հակառակվելով, ամբողջ գիշերներ են լաց-ողորմում։ Ամօրն և անդադարվորութեան են հասարակաց ձայնողներ (երբէ պարտական է ցորչ հասարակ պարին մի երկու անգամ գրանվել եկեղեցում) արանց յերեւոյթի կանգնելը ամ-

լեցնող պատմութիւններով։

Մենք դիտենք, որ մեր մայրերը մեծ աշխատանք ունին մեր մարմնական կազմակերպութեան պրոցեսսում կամ հանդիսում. նորա իւրեանց կենսատու կարգամբ, անքուն և անդադար հսկողութեամբ սնուցանելով մեզ իւրեանց սիրասուն գրկերում, կարողացել են պահպանել միայն մեր մարմնոյ առողջութիւնը. բայց միևնոյն ժամանակ, երբ մեր փափուկ սրբանքին, այլ ինն կերակուր սնունդ և մեր հոգեկան և մտաւորական աչքին անաղօտ լոյս էին հարկաւոր և նորա՝ ի ծննդենէ իմանալեաց աշխարհի համար ոչ ինչ տեղեկութիւն չունենալով և մանկութեան օրերում բացի բնական զգացմանց, ոչ մի

ճարի մեջ կամ ապառնոյ յերեւոյթը տանկին պնելու։

Ղեկոնեալ երիտասարդաքնեբից շարքերը, որոնք երանց երկնաւոր են համարում երանց պարտականութեանց յանձնելվը, ցորչափանդիսանքում յանձնելվը և մարդնից հանդուսանքովը և մարդնից մասալ ինքնեբ պարտելվը ամօրն են

հոգեկան սնունդ և կրթութիւն չստանալով, չեն կարողացել ներգործել մեր վերայ այնպէս, ինչպէս պահանջում է այժմ մարդկութիւնը։ Նաև եթէ իւրեանց մայրական կրթութիւնը ցոյց են տուել երբեմն, և կամ խրատել են իւրեանց որդիքը, և այն եղել է այն ժամանակ, երբ նշմարել են նորանց վերայ մի դատապարտելի յանցանք, շատանալով մի քանի հարևանցի լսած ու տեսած խրատներով կամ սպառնալիքներով, որք առանց քրիստոնէավայել օրինակների ոչինչ բարի նշանակութիւն չունին նոցա կեանքի վերայ։

համարում ամենիմաստութիւն և պարկեշտութիւն փոշ առնելը, գնային աղխատանքը, եկեղեցի յաճախելը։ Զնմանալով, որ այդ ոչնչի վարքը, ա՛ն ինչ օգուտ երանց կեանքին վնասին, այլ և վնաս են բերում, և անգամ ապրանքի յիշում երիտասարդների մեջ, որոնք առանց ճանաչելի բերում են համարում, դան ամուսնանալը այնպիսիների հետ, որոնք կարող են յիրանց խեղճ-նեան պարտներ լինել։

Շատ բարեպաշտ ծնողներ, ինչպէս վկայում են քրիստոնէից պատմութիւնները, մի հոգեկան անդորրութիւն և միխիթարութիւն են զգացել, երբ տեսել են թէ իրանց որդիքը առաքինի կեանք են վարում, և 'ի վերջոյ մեռանում իրրև ճշմարիտ և կատարեալ քրիստոնեայ։ Բայց և ճիշ բարձրացնող, հերահերձ և անոյշ կանայքը, որոց սուղը և լայի ձայնը անընդհատ է եղել համարեայ մինչև իւրեանց մահը, չեն կարողացել ունենալ այն հոգեկան զգացմունքը և միխիթարութիւնը, որովհետև չեն ունեցել քրիստոնէավայել կրթութիւն։ Արիւն պիտի եղբակացուցանենք, որ մեր խղճալի կանանց շատ մասը իւրեանց կենցաղավարութեան միջոցները անցուցանում են վերջնիպէս։ Սորանց աղջկերքը հասունանում են միև նոյն կերպով, ինչպէս իւրեանց մայրերը, և նորանց ժամանում է միևնոյն վայը և կոծը, առաւելապէս և այն ժամանակ, երբ յուշի են գալիս զմայլողութիւնից, տեսանելով որ ընտրված ամուսինները չեն համապատասխան իւրեանց ցանկութեան

և կամաց, և եթէ այնպիսիները կամայ և ակամայ հնազանդում են իւրեանց վիճակին, դորա պատճառը է մեր սուրբ եկեղեցւոյ առաքելական խորհուրդը և շատ պայմաններ։

Ծառն 'ի պտղոյ ճանաչի։ Ով որ կամենում է լաւ ճանաչել, թէ ո՞ր ծառնէ բարի, թող նորա պտուղը տեսնէ. այս պտուղները անարգել և առանց դժուարութեան աճում են, բայց երանելի կլիներ մեր ազգը, եթէ նոքա բազմանային ոչ միայն թուով այլ և Աստուածային շնորհքով։ Ձեմ կարող իրաւունք տալ իմ լեզուին, որ սոնայն բան բացարձակ յերևան հանէ, որովհետև մեր ականջները դեռ չեն սովոր լսել և առնել։ Թող խելացի մարդը պատկերացնէ մեր այժմեայ հասարակական կեանքը և կարծեմ, կտեսնէ նորա մէջ շատ բաներ, որոնք կլինեն ընդդէմ քրիստոնէական և բարոյական կեանքին։ Որպէսզի մեր նպատակին հասնելու համար մենք պիտի ունենանք քրիստոնեայ մայրեր ոչ թէ լոկ անունով այլ հաստատուն հաւատով և գործով։

Ս. Մ. Վ_արշամեանց.

Ճ՛ Ա Ռ

Յովհաննէս Միրզայ Էդեանցի, որ կարդայ ընարութենից առաջ։

Մեծապատիւ Անդամներ Մարդասիրական Ընկերութեան։

Ներեցէք ինձ, որ վստահանում եմ այսօր Ձեր առաջև արտայայտել մի քանի խօսք Ձեր այստեղ ժողովելու վերաբերմամբ։ Դա ինձ յայտնի է, ինչպէս ընդհանուրին, Ձեր ժողովելու նպատակը այս ժամին, այսինքն Խորհրդոյ Նախագահի և Անդամների երկք տարին լրացած լինելով, կամենում եք նոր ընտրութիւն անել ՐՍԱՐՁՐԱԳՈՒՅՆ հաստատեալ կանոնի համաձայն կարգելով 'ի նորոյ կառավարիչներ՝ աշխարհքում հռչակված Ձեր Մարդասիրական Ընկերութեան գործերի համար։

Ոհ, ամենայարգելի Ընկերութիւն։

Զգեցիք նպատակ։

Ամենահարկաւորն անհրաժեշտ ժողով։

Այս ընկերութեան տիտղոսը՝ Մարդա-

ոչ բնական անունը ինքն վկայումէ, որ այդ Ընկերութեան նպատակն է մարդ սիրել, մարդկային օգուտը մտածել, մարդկային սերունդի բարեաք վիճակի և դրութեան համար հոգալ, նոր սերունդին նոր ոգի, բարոյական և մտաւորական զարգացումն տալ ընձեռել և այն իւր համազգայիններին։ Այդ Ընկերութեան անունը ինքն ձայնում է արձագանգ է տալն, թէ ես աշխարհի այն Ընկերութիւններից չեմ, որ աշխատեմ ծովերի և ցամաքների վերայ զանազան ապրանքներ փոխարինելով ոսկու և արծաթի հետ, որպէս զի, հաւաքեմ դիզեմ աշխատանքներ և հարստացնեմ իմ բոլոր Անդամներիս ամեն մէկի իւր կարողութեան չափ մէջ տեղ բերած դրամագլխի համեմատ։ Այլ դա իւր ամենասիրելի անունով, որը միայն Հայր Աստուածը և Իւր Միածինը առաւ Իւր վերան, ձայնումէ թէ ,,ոչինչ դրամական շահ օգուտ չկայ իմ որևիցէ Անդամին լրանց ընծայաբերութեանց համար, նոցա օգուտն այն է միայն, որ ազգի զաւակները պիտի կրթուին զարգանան և յառաջ

գնան ժամանակի հետ ազնիւ հոգւոյ, ազնիւ բնաւորութեան տէր մարդիկ, և Ազգի և Եկեղեցւոյ հարազատ զաւակներ լինելու համար։ Ուրեմն, անդամակցողին մնումէ այն յոյսը, որ իւր քանքարը-իւր դրամական նուէրը կարողանայ օգուտ բերել ազգի աղքատիկ զաւակներին։ Կեցցեն միշտ այդպիսի Ընկերութիւններ, որ ծառայումեն հասարակութեան օգտին։

Մեծարելի Անդամներ Մարդասիրական Ընկերութեան, բաւական չէ միայն, որ Դուք Ձեր քրտինքով վաստակածից զոհել էք ամեն մինդ ըստ կարողութեան նուիրադրում այդ Ընկերութիւնը կազմուելու համար, այլ աչքի տակ առէք դորա մշտապէս դոյութիւնը, որով յաւերժացած է Ձեր անունը, ճշմարիտ ասած և քաղաքիս անունը, որ տարիներով յառաջ աննշան էր առանց այդ Ընկերութեան։ Եթէ կամենումէք, որ դա միշտ հաստատ ու կենդանի դոյութեան մէջ մնայ, պիտի սերտ սիրով գրկէք իրար, պիտի եսականութիւնը միկողմ դրած, զոհէք Ձեր անձնական կրքերը ճշմարտութեան և

այդ Աստուածահաճոյ գործն է լրութեան
եւ յաւիտեան տեւողութեան համար։ Բնա-
կան է այդ, երբ մի թաղաւորութիւն
կամ տուն բաժանուի իւր անձին մէջ, չի
մնար ոչ այն տունը և ոչ թաղաւորու-
թիւնը։ Դուք դեռ հեռի մի՛ գնալ,
Ձեր աչքի առաջ ներկայացրէք Դրանսի-
ան, տեսէ՛ք թէ ինչ վիճակի մէջ է, և
որքան անմեղ զոհեր է զոհել. դորա
պատճառն ինչ է արդեօք, ո՛չ այլ ինչ,
եթէ ո՛չ, իւր տան մէջ երկպառակու-
թեամբ ցանված սերմերն, որ իւր դլխին
բերին այն մեծամեծ թշուառութեան
պտուղները։ Եւ ինչո՞ւ ենք հեռի դնում,
երբ պակաս չէ եղել մեր ազգի միջից
որոմներ թէ հին և թէ նոր ժամանակնե-
րում ևս։ Վերջապէս, եթէ մի հզօր տէ-
րութիւն կործանվում է երկպառակութե-
նով, եթէ մի ընդունակ ու լուսաւորված
ազգ, որի մէջ սէր ու միաբանութիւնը
սով լինելով, վատթար դրութեան է
հասնում, ապա որքա՞ն շուտով կարող
են քակտուիլ այդպիսի փոքրիկ ընկերու-
թիւններ, երբ նոցա անդամների սրտերը

մի սիրոյ խմորով շաղախուած չլինին, երբ
նոցա միտքը և կամքը համապատասխան
չլինին իրար։ Վա՛յ է այն ժամանակ նո-
րանց համար, վա՛յ, և կործանումն նոցա
մեծ յոյժ։

Եւ որովհետև այդ Ընկերութիւնը
բաղկացած է Հայազգի զանազան քաղա-
քացի զանազան անդամներից, որոնցից
ոմանք չեն դտանվում այստեղ այս ըս-
պէիս, ուրեմն Դուք ևս պատասխանա-
տու եք Ձեր մաքուր խղճին և նորանց
անմեղութեանը՝ նոցա փոխարէն ընտրող-
ներ լինելով։ Դուք ևս բախտաւոր եք,
ինչպէս և այս քաղաքը, որովհետև, այս-
տեղ է կենդրոնացած այդ Ընկերութիւ-
նը։ Առաւելապէս բախտաւոր է քաղաքս,
վասնզի, չնայելով որ Թէպէտ Ընութիւնը
զրկել է դորան իւր քանի մի զարդարան-
քից, պարդևել է դոցա փոխարէն հարուստ
հանքեր և այդ ծովը, որոնք եղել են զա-
նազան քաղաքներից պատճառ ժողովման
և Հայազգի հարուստ և երևելի մարդ-
կանց, որոնցով կազմուել է այդ Աստու-
ածահաճոյ Ընկերութիւնը, Ընկերութիւ-

նը, որով ուրախ է Ազգը և իւր թէ հոգևոր և թէ աշխարհական գաւակները։ Շնորհակալութեան արժանի համարելի է այդ Ընկերութեան գործերի մինչև այսօր կառավարիչներին, որոնք յանձն են առել այդ քան տարվայ ընթացքում կառավարելու դորան։ Եւ ինչպէս երևում է Դոցա գործունէութենից, պակաս հոգացողութիւն չեն ունեցել։ Խօսքիս ապացոյց կարող են լինել դոցա Անդամներ շատացնելը, երիսեռ ուսումնարանների, տպարանի և մատենադարանի հոյակապ և ընդարձակ շինութիւնները, որոնք էին միայն դժուար բաները Ընկերութեան գործունէութիւնները կարգաւ պահպանելու համար, էլ այսուհետև ըստ իմ կարծեաց չ'կայ դժուարութիւն, որքան մինչև այսօր։

Ես էլ չ'գիտի երկար խօսիմ, որովհետև, Դուք սպասումք Ձեր նպատակին հասնելու, այսինքն ընտրութիւն անելու, սակայն, մի սուրբ պարտականութիւն կայ իւրաքանչիւրներիդ համար, որ Ձեր ձախ ձեռները ճշմարտութեամբ դնելով Ձեր սրտի և խղճմտանքի վերայ, նորա արդար

ձայնի համաձայն ընտրութիւն անէք։ Թո՛ղ իւրաքանչիւրը Ձեզանից այդ աղնիւ գործի այդ Մարդասէր Ընկերութեան նպատակը և դորա մշտապէս գոյութիւնը աչքի առաջ ունենալով, ընտրէ այնպիսի հմուտ և գործունեայ կառավարիչներ, որ հարկը պահանջած ժամանակ ամբիալի չմնայ Ընկերութիւնը թէ իւր Ազգի և թէ դրացի Ազգերի առաջև։ Թո՛ղ Ձեզանից ամեն մինը իմանայ, որ դորան կառավարիչները ո՛չ թէ միայն պէտք է մշտապէս նուիրած լինին իրանց անձները այդ գործին, այլև հասկացող և հմուտ կառավարութեան գործերին, Ընկերութեան կանոններին և նպատակին։ Որոյ տևողութեան և Ձեր այդ նոր ընտրութեան յաջողակ կատարածի համար մնում եմ բարեմաղթու Ազգի մի հարազատ գաւակ։

Յ. Մ։

ՀԱՄԱՌՕՏ ՀԱՇՎԻ ԳՈՒՄԱՐԱՑ

Մարդասիրական Ընկերութեան յանուն
Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին Հայոց.

Վասն 1870, 1871 և 1872 ամաց.

ՄՈՒՏՔ

		դրամ.	կոպ.
25	Յունվարի 1870 ամի Հիմնադիր անդամներից Խոսիդրական Անդամները ստացան		
ա.	45 խալաթիական բիլիոնների 2դ փոխառության 5% . . .	4702.	50.
բ.	Այս գումար	9442.	36.
գ.	Մուրհակագրով	3132.	„
		17276.	86
	Յունուար 1870 ամի ստացան		
ա.	Ընծայաբերության նոր 39 Անփոփոխ Անդամներից . . .	3900.	„
բ.	Այս դրամից և բիլիոններից փոխուի	1572.	50.
գ.	Տպարանից արդիւն	1144.	33.
դ.	Լապարիայից, բոլոր ծախքը յեռագրծաց դուրս գալով .	35.	65.
		6652.	48
	Յունուար 1871 ամի ստացան		
ա.	19 Անփոփոխ անդամներից . . { ընծայաբերության } .	1900.	„
բ.	52 Տարեկան անդամներից . . { ընծայաբերության } .	260.	„
գ.	Այս դրամից և բիլիոններից փոխուի	1332.	96.
դ.	Լապարիայից, բոլոր ծախքը յեռագրծաց դուրս գալով . .	64.	70.
ե.	Առանձին ընծայաբերության պ. Աստուածատրեանցից .	68.	„
զ.	Տպարանից արդիւն	1554.	97.
		5180.	65
	Յունուար 1872 ամի ստացան		
ա.	8 Անփոփոխ անդամներից . . { ընծայաբերության } . .	800.	„
բ.	44 Տարեկան անդամներից . . { ընծայաբերության } . .	245.	„
գ.	Ապակոշոյեցի լուսահոգի Պօղոս Գասպարեան Ալեքսանդրացուն	2000.	
դ.	Բիլիոնների և գումարաց փոխուի	1059.	30.
ե.	պ. Աստուածատրեանցին սուտ շահագոյանալոյ համար . . .		
	300 դրամ բիլիոնից օգուտ	100.	70.
զ.	Տպարանից արդիւն	478.	27.
է.	Լապարիայից, բոլոր յեռագրծաց ծախքը դուրս գալով . . .	39.	29.
ը.	Ընկերության պապիանեալ գրեան վճարելի	19.	30.
		4741.	86
	Ընդհանուր գումարն է	33851.	85

ԵԼՔ

		դրամ.	կոպ.
	Յընկալաց երից ամաց ծախք է եղել:		
	'ի 1870 ամի սուտ է դրուեցի օրինրդաց աստուածաբանի վարժապետաց, ընկերության արդիւնքաց, տպարանի գրաշարքներին և զանազան բարեգործության համար.	2611.	33.
	'ի 1871 ամի նմանապէս աստուածաբանի վարժապետաց, արդիւնքաց, տպարանի գրաշարքներին և բարեգործության համար	3402.	15.
	'ի 1872 ամի յ25 յունվարի 1873. Օրինրդաց աստուածաբանի, վարժապետաց արդիւնքաց, տպարանի և բարեգործության համար	2749.	72.
		8763.	20.
	Ծախսն հանելով եկամտից մնաց է	25088.	63.
	Ուրեմն ընկերության ոեկիսանության մնան		
ա.	Աստուածաբանաց, տպարանի և ասաստանարարանի ընտրությունները, որոնց համար ծախք է եղել	7715. 93	
բ.	Տպարանի համար գնուած երկու մամուլներ և նորանց պարագաներն	3441. 78.	
գ.	45 հատ խալաթիական բիլիոններ *) արժէն ամեն մէն 105, 50 կոպ.	4702 50.	
դ.	Մուրհակագրով պարտուել	3132. „	
ե.	Վճարելի գրեան	312. „	
զ.	Այս գումար	5784. 42.	
		25088. 63.	

(*) Ծանօթ: Ի փետրուարի բոլոր Անդամոց Մարդասիրական ընկերության աբելարդեմ համարում նշանագրել այս փետ. բոլոր ընկերության խալաթիական բիլիոնների նշանները:

Տոմակ.

Սեր. 979	Ամ. 1	Էն յ 25	Նոմ. հայ.	24
„ 974	„ 13	„ „ 20	„	7
„ 979	„ 31	„ „ 35	„	4
„ 973	„ 34	„ „ 42	„	8
„ 8485		28	„	1
„ 17154		22	„	1
		Ընդ ամէն		45

Ուղղեալ ընդ իսկականին: { Գանձապետ Գրիգոր [illegible]մայեանց: Քարտուղար Սերգեյ [illegible]ուշանեանց:

«Ազգային գրադարան»
NL0108388